

## 32. ՇԱՀԲԱԶ ԹԱՔԱՎԵՐԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա՛լ ա՝ չիլա՛լ մին Շահբազ։ Էս Շահբազս տուս ա՝ եկալ քյինացալ ման կյալ։ Մին ճղացպանի ախճիգյ ա տրեսալ շատ նախշուն։ Էս Շահբազս մթկումը տիրալ ա, վրեր էն ախճիգյը օղի։ Քյինա՛ցալ ա տոն, մին մարթ ղրկալ, թա. «Քյինա փլան ճղացպանին ախճկանը ասի. «Շահբազը քյեզ օղում ա»։ Էս մարթը քյինացալ ա ասալ։ Էս ախճիգյն ասալ ա. «Քյինա ասի՝ մին փեշակ սրվերի, կյամ»։ Էս մարթը քյինացալ ա ասալ։ Էս Շահբազն ասալ ա. «Ես թաքավեր, հինչ ըմ ա՞նում փեշակը»։ Էս մարթը քյինացալ ա էս ախճկանն ասալ։ Էս ախճիգյն էլ ասալ ա. «Մինչև վրեր փեշակ չի սրվերի, կյա՛լ չըմ»։ Էս մարթը քյինացալ ա Շահբազին ասալ, էս Շահբազն էլ ասալ ա. «Հինչ վրեր ասի, սրվերելու վրմ, թա՛քյ ինձ կյա՛»։ Էս Շահբազը մարթ ա ղրկալ, թա՝ քյինա՛ ասի. «Քյեչտ կտրողի շագյերդ նի մտնեմ»։ Քյինացալ ա ասալ, էս ախճիգյն ասալ ա. «Հինչ փեշակ օղում ա սրվերի, թա՛քյ փեշակ ինի»։ Էս մարթը եկալ ա ասալ։ Էս Շահբազրս էլ սրվերելիցը ետնան հըրսանիք ա ըրալ, տարալ։

Մին վախտ էս Շահբազը տարվիշի շորեր ա՝ կյեցալ, քյինացալ տրեսնա ուրա՛ն տիրա՛ծ մա՛զանտա՛վն ը՞ն զատ ծախում, թա՝ չէ։ Էս Շահբազը քյինացալ ա մին քյա՛ղլաբա՛զի տուքյանի քշտի նստալ, թա. «Քյա՛ղլափաչան քանի ը՞ս տալիս»։ Թա. «Մին շա՛հի»։ Ասալ ա. «Մին ման ածի»։ Քյա՛ղլաբազնեն ասալ ըն. «Եկ մեչ ղոլ»։ Քյինացալ ա։ Փոնալ ըն, քցա՛լ մին խոր մաղաղա, թա՝ մոր-

թեն։ Էս քյալլաբազնեն էլ օրամեչ մին մարթ ըն իլալ ըսպանում։ Էս Շահբազը ղաչանք ա ըրալ, թա. «Քմատաղ, ինձ ըսպանիլ միքյ, ես քյեչա կտրող ըմ, լավ քյեչա կկտրեմ, կըտանեքյ Շահբաղին յրա ծախեքյ, ծեղ շատ փող կըտա»։

Ետնան էտ քյալլաբազնեն շատ պուրթ ըն առալ, էտ Շահբաղին ըն տրվալ, թա. «Քյեչա կտրի, տանենքյ Շահբաղին երա ծախենքյ»։ Ետնան էս Շահբաղին կնեգյը վրեր տրեսալ ա Շահբազը եկավ ոչ, դյիդացալ ա, վըեր կլոխը պան ա եկալ։ Ինքյը մին փարտա յա քցալ, քմտկին նստալ, դուվաննե կտրալ։ Ետնան էս Շահբազս քյեչա յա կտրալ հու քյեչին ղրաղին էլ կյիրալ, թա. «Ես՝ Շահբազըս, հեն ըմ փլան քյալլաբաղին դուքյանին խոր մաղաղումը, ղոշուն կապեցեքյ, եկեքյ քյալլաբաղին կապոտեցեքյ, ինձ էլ տուս պերիքյ»։ Ետնան տվալ ա էս քյալլաբաղին, թա տար Շահբաղին կնգանը յրա ծախի, նա շատ փող կըտա։ Ետնան էս քյալլաբաղը տարալ ա Շահբաղին կնգանը յրա ծախալ։

Ետնան էս կնեգյը տրեսալ ա, վըեր քյեչին ղրաղին կյրած, կարթալ ա, տրեսալ կյիրած, թա. «Ես՝ Շահբազըս հեն ըմ փլան քյալլաբաղին դուքյանին խոր մաղաղումը, ղոշուն կապեցեքյ, եկեքյ քյալլաբաղին կպոտեցեքյ, ինձ էլ տուս պերեքյ»։ Ետնան էս կնեգյը ղոշուն ա վըհաքալ, քյինացալ ըն քյալլաբաղին կպոտալ. ետնան Շահբաղին տուս պերալ։ Ետնան քյալլաբաղին էլ ծիյան վրեռան կապալ ըն, քաշքաշ ըրալ ըսպանալ։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին։